ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ,ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը որոշեց.

Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

2022թ.-ի հունիսի 27-ին, ժամը 11:00-ին՝ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ արտահերթ նստաշրջան գումարելու և Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների ընտրություն իրականացնելու վերաբերյալ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածով Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների թիվն ավելացվել է երկու դատավորով և հիշյալ պալատի դատավորների թվակազմը սահմանվել է ութ դատավոր:

25.02.2022թ.-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-24-Ն սահմանադրական օրենքը, որի 3-րդ հոդվածով ՀՀ վճռաբեկ դատարանում ստեղծվել են վարչական և հակակոռուպցիոն պալատներ: Նախագծերի

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր 2021 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդունմամբ, ինչն իր հերթին բխում էր Հայաստանի Հանրապետության դատական եւ իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունը ապահովելու, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-24-Ն սահմանադրական օրենքով սահմնված նորմերը կիրառելու և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջնորդվելով՝ անհրաժեշտություն է առաջացել գումարել արտահերթ նստաշրջան և իրականացնել ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների ընտրությունը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

24.06.2022թ.